Կեդք. Վարիչ Մարտիր այդ տողերն իսկ բաւական են, համոզուելու համար թէ Հնչակեան տեսակէտը ուժիղ կերպով պաշտպանած եմ ես, այլապէս՝ եթէ ես «իրեւ Դաշնակցական» (հա՛ հա՛ հա՛ հա՛) խօսած ըլլայի, այն ժամանակ գոնէ Դաշնակցական երեսիումանները պիտի պաշտպանէին զիս և ոչ թէ «ընդհանուր զգուաննը» պիտի առաջանար. իսկ եթէ իրը պահպանողական խօսէի, գոնէ պահպանողականները զիս պիտի բանէին:

Եւ որովհետեւ ես իր Ս. Դ. Հնչակեան խօսած էի և ընդհանուրին տեսակէտները ջախջախիչ եղանակով ջրած էի, ուստի չատ արամարանական էր որ «ընդհանուրն» ալ դժգոհ մնային: Հետեւանքը ի՞նչ եղաւ. այն որ միր տեսակէտը յաղթող հանդիսացաւ և թէ Դուքեանն ու թէ Վարչութիւն տապալուեցան, թէեւ իմ անազնիւ հակառակորդներս դարձեալ չամչցան և

ինդիբները զիսիվայր զջելով զիս չեղոքացնելու մէջ գտան իրենց մօրիէտական հանգիստը:

* * *

Սիրելի ընկերներ, Զեր լուրջ ուշադրութեան կը յանձնեմ նաև հետեւեալ՝

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԱՄԱԿՈ

ԹԻՒ 18

Կ. Պոլիս, 1/21 նոյ. 1910

Ս. Դ. Հնչակեան Կուսա Տանկարանի
Կեդրանական Վարիչ Մարտիրն

Սիրելի ընկերներ,

Մեր կեանքը բաղմաթիւ փորձերով հաստատած է, թէ երբ Պոլսոյ մէջ Կուսա կեանքը կինդանի արտայայտութիւններ կ'ստանայ, ատիկայ բարերար ազդեցութիւն կ'ունենայ գաւառական մեր կազմակերպութեանց վրայ, իսկ այս տեղի անշարժութիւնը, դանդաղ կոտութիւնը՝ ընդհակառակը կը վճատեցնէ զանոնք:

Արդ, քանի որ նոս գանուող մի շարք գիտակից ու կարող ընկերներ ամենայն ձեռնասութիւն ունին գանկալի եռուզեռը ստեղծելու և կուս. գիրքն ամրապնդելու,

Քանի որ ուրիշ կուսալյութիւններ գրեթէ ամէն օր հրապարակի վրայ կարտայայտուն՝ մամուլով ու բեմէն,

Քանի որ նոյն բանը ընկելու համար - գէթ բեմով նիւթական զոհոզութիւններ ալ չ'պահանջուիր և մանաւանդ որ այնքան գեղեցիկ առիթներ են ներկայացած մեր էութիւնը պարզելու,

Ապա ուրեմն կը զարմանամ, որ կեդք. Վ. Մարմինդ հակառակ իրեն եղած թելադրութիւններուն՝ կը

թերանայ իր պարտականութեանց մէջ, և ասանկ ժամանակ մը Ս. Դ. Հնչակեան բեմը կը դատավարտէ ամշլութեան: Բողոքելով հանդերձ այս անդործութեան դէմ, որ բարոյական զեղծում մը կը նկատեմ, կը պահանջմ միանգամայն, որ վերջ մը դրուի այս վիճակին և ձեռնարկուի Պօլսոյ հայաբնակ թաղերուն մէջ հրապարակի խօսութեանց:

Երկրորդ Պօլսը գօրեղապէս կաղմակերպել, նոյն բանը բաել է: Մինչդեռ ինձ յայտնի է, թէ կեզր. Վ. Մարմինդ ոչ միայն մըջոցներ ձեռք չառներ արագ և նպատակայարձար եղանակով կաղմակերպելու համար Պօլսոյ թաղերը, այլ իր կամայական ու հակականութեան վարժունքով տեղի կուտայ արդէն կաղմակերպուած վայրերու լքումին ու քայքայման: Օրինակի համար, Ամրաթիոյ մէջ մէր կաղմակերպութիւնը երկար ժամանակէ ի վեր այդ կամայականութեան երեսն մէջապէս տուժեց քե բարոյապէս եւ քե նիւրապէս:

Եւ հակառակ մէր կրկնակի, եռակի հաւասարացում ներուն ցարդ տակաւին կը յարատեւէ անբացասրելի վիճակը. ինչ որ կը մէջ զիս մտածել, թէ մէր արդի կեզր. Վ. Մարմինը, դժբաղդաբար, անընդունակ է ոչ միայն նիւթական զօնողութիւն պահանջող գործեր կատարել, այլ և անանկ գործեր, որոնք լիովին կախում ունին կուսակցական նախանձափրութենէ, բարեացականութենէ ու խոհականութենէ:

Ես ինձ պարտք եմ համարած, պարտք կը համարիմ, և պարտք պիտի համարիմ կանդնիլ մէր իրականութեան մէջ բացարձակ օրինական գետնի վրայ երականութեան մէջ բացարձակ օրինական գետնի վրայ եւ մասնանշել այն թերութիւնները, զորս բառնալը անհրաժեշտութիւն կը նկատուի Ասիկայ բարոյական թերութեան մէջ, անշուշտ, որ վայելած են ու կը վայելում մէջ, անշուշտ,

Են Ս. Դ. Հնչակեան ընկերներ և ամեն անգամ որ օրինակը - գօտեպնդիչ օրինակը վերէն բղխելու փոխարէն վարէն ձագելու պահանջ ներկայանայ, անոնք կօգտուին ատկէ և կ'ըսեն իրենց խօսքը: Ուստի եզրակացնելով, ընկերաբար կը թերագրեմ Ձեզ անյապաղ և ամեն կերպ ձեռնարկել կ. Պօլսոյ բոլոր թաղերան մէջ հրապարակային ու համակրական ժողովներու, համաձայն թիւ 9 համակիս, և ճշու կողմէն ալ ոյժ և մըում տալ Պօլսոյ Ս. Դ. Հնչակեան կաղմակերպութեանց, իսկոյն բաւարարութիւն տալով անոնց բանաւոր, օրինական և գործադրելի պահանջներուն:

Ընկերական բարեներով ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ

Այս համար կո ալ մնաց անհետեւանք:

Դ.

Թիւ 306 շրջարերականին 10րդ էջը կը պարունակէ ուրիշ կէտ մըն ալ, որուն մասին կարծէ երկու խօսք ըսել:

Կեզր. Վարիչ Մարմինը կը զրէ

« Դրանից յետոյ տեղի է ունենում Ազգ. Երեսփ. Ժողովի նիստը, ուր Արամեանցը դարձեալ իր հականչչակեան տեսակէտը (!) այսպիսի ծայրայեղութեան է տանում, որ երեսփախան ընկերներից ծելալ ու ծանկութեան ստիպուած են Անոնք հինգ ժողովի մէջ վիւկան ստիպուած են Անոնք հինգ ժողովի մէջ յայտարարել, որ Արամեանցի խօսածը Հնչ. Կուսակցութեան հետ ուեէ առնչութիւն չունի, հետեւաբար և գործի

է արժէքից՝ մեր տեսակէտով։ Ուրեմն այդ բոլորից յետոյ էլ Արամեանցը հակա-հնչակեան թէզի (!) վրայ էր կանգնած և Ազգ։ Ժողովը մէջ հնչակեանութիւնը երեսում էր պառակտուած։

Կեդր. Վարիչ Մարմինը հոս ալ իր անազնուութիւնը ցոյց կուտայ երբոր միջադէպ մը կը պատմէ առանց ըսելու թէ ինչ պարագաներու տակ է եղած։

Սլրելի ընկերներ, Դուք այդ առղերը կարդացիք ու թերես զարմացաք ալ թէ Արամեանցը իրաւ այս ի՞նչ յիմարութիւններ է ըրած, որ մեր պատուական բժիշկը Գր. ձերալ և մանաւանդ սա մեր ծանօթ ծերու-նին՝ ծանկիւլեանը այդպէս վրդուուեր են։ Ներեցէք որ ևս եղելութիւնը պատմեմ և ըստ այսմ ինքերդ գատէք։

Մեր կուս. ժողովին երթէք կանխառեսուած չէր թէ, եթէ պատահի որ Ազգ. Ժողովը երկու հրաժարա-կաններէն մէկն ընդունէր և մշտուը մերժէր, ի՞նչ պիտի ըլլար մեր գիրքը։ Այս մասին ընտա խօսք եղած չէր և մեր որոշումն այն էր եղած թէ երկուքն ալ պէտք է ընդունուին։

Յանկարծ պատահեցաւ որ Ազգային ժողովը հուեից առաւելութեամբ որուեց մերժել Քաղաքական ժողովին հրաժարականը, և այսուհետեւ անցաւ Պատրիարքական հրաժարականի խնդրին։ Հիմա երկակայեցէք իմ դրու-թիւնը։ Խօսքին կարգն ալ իմին։

Ես՝ նկատելով որ Քաղաքական ժողովին պահպա-նումը յետակիմական-պահպանողական խմբակին յաղ-թանակը կը նշանակէր, նկատելով որ մեր որոշումն էր Պատրիարք և Վարչութիւն միանդամայն ձգել, նկատե-լով որ ինքրին այդ կերպ կարգադրուելովը Տաճկահայ ժողովուրդը պիտի ենթարկուէր նորանոր տակնուվրա-յութիւններու, աչքի առաջ ունենալով նաև այն պարա-

գան որ անոնցմէ մէկուն բացակայութիւնը կը զօրացնէր միւսին դիրքը, ինչ որ մեր տեսակէտին կը վնասէր ալ, ուստի առաջարկեցի, թէ խնի որ Վարչութեան հրա-ժարականը մերժուեցաւ, նոյն հիմունքով պէտք է մեր-ժուի նաև Պատրիարքին հրաժարականը և իսկոյն ալ յարեցի թէ շատ չանցած, ընդամենը քանի մը օրէն Ազգ. Ժողովը պիտի պարտաւորուի գալ Ս. Դ. Հնչակ-եաններուս տեսակէտին և պիտի հրաժարեցնէ թէ՛ Պատ-րիարքը և թէ Վարչութիւնը։ Պարզ բան է թէ այս յայտարարութիւնս մեր կուս. Ժողովին որոշումէն չէր բղխեր, գլուզ պարագան չկանխատեսուելուն պատ-ճառով։ Սակայն իմ այս վարմունքը ինչո՞ւ և ի՞նչպէս կրնար հակահնչակեան կոչուէլ, քանի որ ևս Ազգ. Ժո-ղովին ամբունչն իսկ բարձրիգոչ աղաղակած էի թէ մինք չենք կրնար հանդուրժեր ու և է իսմբակի յաղթա-նակին ի միաս Տաճկահայութեան . . .

Ահա այս արտայայտութեանս դէմ էր որ դիտու-ղութիւն ըրին ձերալ և ծանկիւլեան, խելքերնին չհաս-նելով և իրենք իրենց չկրնալով հայիւ տալ թէ նոր ե-րեւոյրը ինչպիսի փոփոխութիւն կը մացնէր կացու-թեան մէջ։

Ես անմայ դիտաղութենէն բնաւ չաղգուեցայ, որով-հետեւ ձերալը այդ քաղաքականութիւնէն բնաւ բան չի հասկցաւ և ինքնինքը չկրցաւ պահել, իսկ ձան-կիւլեանը իմ համոզումովս արդին չնշակեան չի, որով-հետեւ այդ մարդը իր կեանքին մէջ այնքան չապիկ փո-խած չէ, որքան որ կուսակցութիւն փոխած է և ամեն կուսակցութեան մէջէն փիսութիւնով ելած է. և հիմա ցաւալի թիւրիմացութիւն մըն է ծանկիւլեանին Աօ-սիալ Դէմօքրաթ Հնչակեան ըլլար, ծանկիւլեան ոչ միայն քաղաքականութիւնէ բան չհասկնար, հապա եթէ

տաղի մը աշխատի պիտի չկրնայ ըսել թէ ի՞նչ կը նը-
չանակէ սօսիալիզմ և Հնչակեանութիւն, բառիս բովան-
դակ նշանակութեամբ անզրագէտ և ոտքէ զլուխ տղէտ
ծերուկ մը։ Մանաւանդ որ անիկա ինձ դէմ այլպէս
վարուելով յոյս ունէր Ազգ։ Ժողովի մեծամասնու-
թեան (պահպանողականներուն) աչքը մտնել, ո՞վ գիտէ,
ինչ ակնկալութիւններով, ինչ որ իր վերաբերմամբ
չարդարացաւ ալ...

Աւելորդ չեմ համարեր հոս մատնանշել երկու պա-
րագայ.

Ա.- Ազգ . Ժողովի այդ նիստին ներկայ եղող ըն-
կեր Ժիրայր, որ Կուս . Պաշտոնաթերթին թղթակիցն
էր վերայականուի ու արտօնութեամբ, վերոյիշեալ ճառէս
յետոյ մօտեցաւ ինձ, ձեռքս սեղմեց և բաւ . «կեցցես
ընկեր Արամեանց, շատ ճարտար եղանակով կրցար ար-
տայայտուիլ, ասոկէ աւելի յարմար միջոց չէր կրնար
առաջարկել ուէ Ա . Դ . Հնչակեան»։ Բնկեր Ժիրայրի
անձնական յարաբերութիւնները ինձ հետ աղէկ ալ չեն
թէւ, բայց ատով մէկանեղ նա իր կողմէն չնորդաւորեց
իմ վարժունքը, ինչ որ ինձ համար աւելի մնձ կշիռ-
ունի, քան ձանկիւլեանի մը կանչուըստուքը։

Բ. - Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան կեղրանա-
կան Վարչութեան Պարակաստանի լիազօր ներկայացու-
ցիչը իր 1940 Յունուար 17/30 թուակիր նամակով ահա
թէ ինչ կը գրէ ինձ նոյն մաշաղէպին առթէւ՝ «կեզր .
Վարիչ Մարմնի Պոլսում գտնուող անդամների քաջա-
գործութիւնը կարգայի, բնականարար չ'զարմացայ,
որովհետեւ ուրիշ բան էլ սպասել չէր կարելի նրանցից .
Ես վարուց այդ խայտառակութիւնները գուշակել էի :
Այստեղի ընկերութիւնների համակրութիւնը քոյ կողմն է, ինչ-
պէս և՛ իմս : Ազգ . Ժողովում գու պահել էիր գնահա-
տելի չեղոքութիւն և կառարել քննադատի դեր ;

Կարդացի նաև ձանկիւլեանի յիմարութիւնների մա-
սին, չարժէ դրա համար ցաւ զգալ, որովհետեւ նա վի
անօրինակ մարդ է : . . . :

Այս երկու վկայութիւնները իբրև փաստ կրնան
ծառայել և որոշ գաղափար տալ Ձեզ :

Վերջապէս դարձեալ կը կրկնեմ, եթէ կեզր . Վա-
րիչ Մարմնի համար իմ դիրքս և արտայայտութիւններս
«հակա-հնչակեան» էին, ինչո՞ւ անմիջապէս հրապա-
րակ չեկան լրագրութեան մէջ և հրապարակային ժո-
ղովներով ու մընչեւ անդամ թուոցիկներով չփութացին
իսկական Հնչակեան տեսակէսը մէջանեղ դնել :

Ես փաստ ունիմ ձեռքս, որ ոչ թէ Տաճկաստանի
հեռաւոր Մանաճիւղերը տեղեկութիւն չունեն անցու-
գարձերէն, այլ կեզր . Վարիչ Մարմնի քթին տակ գտնւող
Մանաճիւղերն ալ ուեէ հրահանդ չէին ստացած ազգա-
ինը ու քաղաքական ամենակարեւոր խնդիրներու մասին :
Դեռ հոկտեմբեր 15 ին կեզր . Վարիչ Մարմնի ներկայա-
ցուցիչ Սաօն Պարտիզանին նամակ կը գրէ կեզր . Վա-
րիչ Մարմնին կը գանգատի, որ հրահանդ խնդրող իրենց
գիտումներուն պատասխանած չէ կեզր . Վարիչ Մարմն-
ինը, ուսափ կը գրէ գառնացած շեշտով՝ «Ճեր հրահան-
գը ունենալու համար սպասեցի, կսպասենք մընչեւ վա-
ղը՝ շաբաթ երեկոյեան, հեռագիր-համակուլ հրահանգը
հացուցէք . . . »

Իեղձ մարդիկ հրահանգը կսպասեն մարմնէ մը, որ
ինքն իսկ տեղեկութիւն չունի անցուդարձերեն, որովհետեւ
մէկը իշխանաց կղզին վար չ'իջնէր և միւսները . . .
իրենց ընտանեկան - անձնական զբաղումներէն : Բնա-
կանարար այդ վիճակին մէջ կեզր . Վարիչ Մարմնի
հաշուին չէին գար իմ խստապահանջութիւններս . . .

Ե.

Թիւ 306 շրջաբերականը արդէն ծայրէ ի ծայր սուրբիւն է, այնպէս որ երբ մտադրութնք գրել, հարկ կըլայ անոր բոլոր նախադասութիւնները հերքել:

Սակայն ասոր փոխարէն ահաւասիկ պաշտօնապէս և հրապարակով ԱՏՍԽՈՍ կանուանեմ կեղբ. Վարիչ. Մարմինը, եթէ ըսածնուն վատահ են, թող ատեան մը կազմեն և զիս դատի հրաւիրեն: Այս ժամանակ յայտնի պիտի ըլլայ թէ ո՞վ արժանի է արտաքսուելու:

Ես միշտ ըսած եմ և դարձեալ կը կրկնեմ, թէ ՊԱՏՐԱՍՏ եմ ԴԱՏՈՒԵԼՈՒ, թող կազմուի անաշառ ատեան մը և արդիւնքը թող հաղորդուի բոլոր մասնա ծիւզերուն և ընկերներուն:

Հրապարակով ասպարէզ կը կարդամ իրենց, որ կամ թիւ 306 շրջաբերականնին ետ անեն և կամ ընդունին թէ իրենք ԱՆԱԶՆԻՒ ու ՓՈՅԲՐՈԳԻ ՎԱԽԿՈՏՆԵՐ են, որ պառաւի պէս զրապարտութիւններով ու բամբասանքներով լոկ մըտքեր պղասորելու կը ծառայեն: թէւ համոզուած եմ, թէ հակառակորդներս անանկ մարդիկ են որ փոխանակ սիսանին գդալու և դարձանելու՝ այս զրութեանս մէջ ալ «կուսակցութեանս գերազոյն շահերի տեսակետից նպատակայարմաք չդառնող» մաղեր փնտուելու ելնեն, նորանոր ստախոսութեամբ ու ըսի ըստաներով ընկերները զբաղեցնելու:

Թիւ 306 շրջ. ի մէջ կըսեն՝ «Արանից յետոյ Սամաթիայում գումարուած աղասականների միավութում Արամեանցը դարձեալ հականչակեան թէզ (!) է պաշտպանում ամբիոնից: Յուզումը քե լնիւթերի եւ քե հասարակութեան մէջ զագարիսակէտին հասած եւ»:

«Եւ որովհետեւ Արամեանցի հակառակական ընթացքը դարձած էր անսանելի, և կուսակցութիւնը

պարզապէս վարկարեկումէր նրա արարմունքների համար . . .» ուստի կեղբ. Վարիչ Մարմինը 1910 Դեկտ. 7 ին կորոշէ

«Ա. Զեղոքտցնել զայն կուսակցութեանս շարքերէն:

«Բ. Անոր չեղոքացումը յայտարարել թերթերութիցոցով, ի հարկին ծանուցանելով նաև Մասնաճիւղերին:»

Է՛, ալ ըսելիք չի մնար, երբ կեղբ. Վարիչ Մարմինը անպատկառ հաճութիւնը կունենայ գրելու, թէ «Յուզումը թէ ընկերների և թէ հասարակութեան մէջ գագաթնակէտին էր հասած»:

Վա՛յ սարսափելի՛ բան, ամբո՛ղջ Պօլիսը տակնուշաբայ է եղեր, բոլո՛ր ընկերները և հասարակութիւնը ստափիկ յուզուեր են եղեր . . .

Ի՞նչՌ՞ի սակայն:

Աստանայի կոտորածը չ'յուզեց Պօլոյ հասարակութիւնը, «Նոր Աշխարհին» լոյս չտեսնելին ալ չ'յուզեց, կրօնափխութիւններն ալ չյուզեցին, սպանութիւններն ալ չյուզեցին, Խշանաց կղզիին մընչե Մաքրիգիւղ և մընչեւ վասպուրական տարածուող անարդարութիւններն ալ չյուզեցին, բայց յանկած նոյն այդ հասարակութիւնը . . . ընկ. Ասպանգիւեանի երեւակայութեան մէջ այնքան կը յուզուի որ ընդհանուր ապատամբութեան մը առաջը առնելու համար կեղբ. Վարիչ Մարմինը կորոշէ զիս չեղոքացնել, այս ալ Դեկտեմբեր 7/20 ին (չա լսեցէք), թերթերո՛ւ միջոյաւ, առանց բացարութեան, առանց պատճառաբանութեան, առանց չեղոքացուողին և անոր պատկանած Մասնաճիւղին լուր տալու, առանց մտածելու թէ . . . «Երկնք Սատուած կայ և կամ խիղճ ըսուած բանը գոյութիւն ունի . . .»:

1910 թեկտեմբերի 11 ի առաւօտեան յանկարծ «Ազատամարտի» մէջ կը կարդամ իմ չեղոքացման հրապարականախառ յայտարարութիւնը։ Այս բանը սաստիկ կարգէ վրաս և կեղք։ Վարիչ Մարմելին կուղղեց հետեւեալ

Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Ն Ա Մ Ա Կ Ս

ԹԻՒ 34

Կ. Պոլիս, 11/24 Դեկտ. 910

Առ. Դեմ. Հնչակեան Կուսակցութեան
Տանկ. Կեդրոնական Վարիչ Մարմելին

Պօլսոյ բոլոր թերթերուն մէջ այսոր կարդացի Զերպաշտոնական յայտարարութիւնը, որով զիս չեղոքաւած կը հնչակէք կուսակցութեան շարքերէն, առանց ունէ պատճառարանութեան և առանց մընչե իսկ ինձ տեղեկացնելու։

Արդ, սերկայիւս 48 (ժառանուն եւ ուր) ժամ միցոց կուտամ Ձեզ հրապարակաւ, նոյն քերքերուն մէջ, եւ առնելու այդ ապօրեն լայտարարութիւնը։

Երեւ «Բնականդիմեն» եւ «Փամանակի» երկուարքի եւ «Արեւելի» ու «Ազատամարտի» երեւարքի օրուան քիւերուն մէջ չերեւայ պատոյս բաւարարութիւն տուղիներնազիր յայտարարութիւնը, այլիւս պատասխանատու չեմ իր ունեւ նետեւութեան համար ու ինքինին ազատի համարիմ յարմար սեպած եղանակով բանալ վարագոյր եւ ամեն հեմարութիւն երեւան հանել։

Ս. Դ. Հոչ. կուսակցութեան անդամ

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵՍՆՅ

Նամակիս մէջ յիշուած պայմանութամբ լրանալէ յետոյ, քանիցս ընկերներ եմ զրկած կեղք. Վարիչ Մարմելին, որպէսզի փութան գարմանել այն վէրքը որ հրապարակաւ բայցած էին։ Ուէ միջոցով կարելի էր կարգադրել ինդիրը և ՊԱՏԻՒ փրկել այդ սարսավելի բուսաբառումէն։ Իմ մէջ յիշաւորած էին անոնք—

Նախ քսան տարուան Յեղափոխականը,
Երկրորդ՝ Ազգային Երեսփոխանը,
Երրորդ՝ Գրական Մշակը,
Չորրորդ՝ ընտանիքի մը սիւնը և
Հինգերորդ՝ պատուազգած Մարգը։

Կեղք. Վարիչ Մարմելնը բնաւ կարևորութիւն չ'ունաւ ոչ նամակիս, ոչ ընկերներու բազմակողմանի գետութերուն և ոչ ալ հասարակութեան պահանջնն։

Այս բոլորէն յեսոյ են՝ նկատելով որ բարոյալէս մեռած վիճակ մը կսպասէր ինձ, եթէ երբէք լուսիւնով կամ զուտ ներքին մը չուցով գործեմ, վերին ասինանի զերազգուուած վիճակի մէջ և սաստիկ ազգուած իմ գէմ գործուած անսաստուած - անհոգի արարքէն, հրապարակ եկայ լրագրութեան մէջ և՝ գարձեալ Կուսակցութեան արժանապատութեան ինայելով իմ քննագատութիւններս կերպուացույի ընկեր Սապահեւեանի վրայ, որպէս ծնող և գաւադիր այս բոլոր չարբներուն։

Սլորելի ընկերներ, կաղաչեմ որ Դուք Զեղ վայրկեան մը երեւակայէք Հմայեակ Արամեսնյի հոգեկան վիճակին մէջ և խոճի մոռք հաշիւ տաք ինքինքնուդ, թէ ինչե՛ր ընկերու ընդունակ պատի ըլլային Զեր խոռվայոյգ հոգիները, ինչքան գառնութիւն հաւաքուած պիտի ըլլար Զեր սրան վրայ, Դուք ի՞նչ երեսով պի-

տի երևայիք Զեր պաշտօնակից երեսփոխաններուն, Զեր ընկերներուն, Զեր պարագաներուն, այլ կուսակցութեանց անդամներուն, երեակայեցէք վայրկեան մը այդ սաբասափելի դրութիւնը, այդ սպանիչ մթնոլորտը և այն ժամանակ պիտի հասկնաք թէ ինչ տալաւորութեան տակ գրէչ եմ վերջուցած հրապարակային քննադատութիւնն գրելու...

Ա՞հ այդ դժոխային օրե՛րը, երթան ու չ'գա՞ն, սոսկալի են անսնք, սիրելի ընկերնե՛ր, սոսկալի՛ են, աւելի վաս քան մտակը...

Եթէ Դուք չեղոքացման յայտարարութիւնը Ազատամարտի մէջ կարդալով յուղուցաք նէ՝ կրնաք մակաբերել թէ Ե՞ս ինչ եղայ: Ե՞ս՝ որ ոչ Համիտին և ոչ ալ Զարին կամայականութեանը ուզած էի հանդուրժել...

Ահ, փակնք այս տողերը, որովհետեւ որքան խորը երթանք, այնքան ալ կը զօրանայ սա համոզումնիս թէ Սապանգիւլեանի պէս մարդիկ «ո՛չ Աստուած ունին և ոչ ալ խիղճ»...

Զ.

Անցնինք վերլուծել կեդր. Վարիչ մարմնի թիւ 306 շրջաբերական-նամակի 11—13 էջերը, ուր ստութեան հետ միացած կը տեսնենք նաև սպիկարութիւնը:

Ահա թէ ինչպէս.—

Ա. կըսեն՝ «յետ չեղոքացման նրա ունեցած ախուր(!) գործերի մասին հարկ եղած հաւասար(!) տեղեւկութիւնները հաւաքելով և ստուգելով երեան եկաւ, որ նա՝ Ա.՝ Սամաթիոյ Մասնածիւղի ընկերների մի մասը գրգռելով ըմբռաստացրել էր Վարիչ Մարմնի դէմ և մամուլով իսկա անպատշաճ լեզուով բողոք բարձրացրել»:

Սիրելի ընկերնե՛ր, Դուք պէտք է գիտնաք թէ Ջամաթիոյ Մ—ճիւղին մէջ կարդ մը ԳԻՏԱԿԻՑ ընկերներ կան, որոնք իրենց մտաւոր—զարգացական—փորձառական—յեղափոխական կարողութեամբ շատ բարձր ձառականից Մարմնի շատ մը անդամներէն, որով անոնք են Վարիչ Մարմնի շատ մը անդամներէն, որով անոնք բողոք մը բառնալու համար ոչ իմ աջակցութեան կը կարօտէին և ոչ ալ ուեէ մէկէ մը կրնան «գրդառուիլ»:

Ըսդհակառակը, Մամաթիոյ Մ—ճիւղը շատ սառնակով ԱՆԿՈՒԹԵԼԻ ԵՂԱԽ խօսք հասկյնել Վարիչ Մարմնին, երբ տեսան որ իրենց վատահութիւնը վայելող անմին, երբ տեսան որ իրենց վատահութիւնը վայելող անդամն ու վարչութեան ատենապետը կը չեղոքացուի առանց մինչև իսկ երկարողով մը իմաց արուելու և Մծիւղն ալ Ազատամարտի և միւս թերթերուն մէջ կը տեսնէ իր ատենապետին հրապարակով նախատուիլ, իր յարմար տեսած եղանակով վարուած է, առանց երեխ մազի չափ ինձմէ թելադրուած ըլլալու:— Ես ոչ միայն չէի թելադրէր, այլ յաձախ ժողովներուն իսկ ներկայ չէի գտնուէր և որ ժողովին ալ որ ստիպեալ գնացած եմ, միւս ձեռնպահ եմ մնացած:

Բ. Սուտ է երբ կըսեն՝ «Դում-Դուաբուի «Ժիրայր»(*) խմբի Յ ընկերներին նոյնպէս ըմբռաստացրել էր և իր թելադրութեամբ ու խմբագրութեամբ խմբի անունով մամուլով բաղոք բարձրացրել:— Այդ ընկերները յետոյ

(*) Ընկեր Մուրաֆի դէմ այնէան լարուած է Սապահիւլեան Վարիչ Մարմին, որ խումբին «Ժիրայր-Մուրաֆ», անունին մէկ է: Վարիչ Մարմին, որ խումբին «Ժիրայր-Մուրաֆ», անունին մէկ է:

Վարիչ Մարմինը փոխանակ ըսելու թէ անկարող է հերքել Սամաթիոյ Մ-ճիւղին հրատարակած ծանր ամբաստանութիւնները, կուզէ իր օձիքն աղատել «կուսակցութեան գերագոյն շահերուն» անունով։ Կարելի՞ է հարցնել, թէ որո՞նք են այդ «գերագոյն շահերը», արդեօք իշխանաց կղզիի վայելքնե՞րը, թէ խեղճ Հնչակեանութիւնը գէպի անդունդ տանելու Զեր գործելակերպը...

Ինչո՞ւ ՓԱԼՈՒՍ ԿՈՒՏԱՅՏ, ինչո՞ւ չէք հերքեր. դուք որ Պատրիարքական սպարզ հրաժարական մը այնքան . . . մատի փաթուց կընէք, ինչպէ՞ս կըլլայ որ Զեղ կամբառատանին ամեննէն ծանրակիւր գեղծումներու և ապօրինութեանց մէջ ու յանկարծ կը պապանձիք և խորին լուսութեամբ կանցնիք այդ ջախջախիչ տօնմանին վրայէն . . .

Այս ալ Վարիչ Մարմինի ինչ ըդպր կը ցցնէ և հառաջող մարդուն համար միայն այս մէկ կէտը բաւական է :

Ե. Ինձ կը վերադրէ Զէյթունցեանի և Յարէթեանի արտաքսման սպարապես :

Մինչդեռ այդ բանը կատարուած է Սամաթիոյ Մ-ճիւղի պաշտօնական ատեանի մանրազնին, անաչառ ու արդար քննութեան հիման վրայ առանց իմ մասնակցութեան. և երբ հաստատուած է անոնց թէ՛ բարոյական և թէ նիւթական գեղծուց գործած ըլլալը՝ Արեւելք թերթի մէջ յայտարարած են վճիռ :

Իսկ երբ Կոհակիլ վերսկուայ հրատարակել Սամաթիոյ Մ-ճիւղը պաշտօնապէս դիմած էր խմբագրութեան և ինդրած հրատարակել ատեանին վճիռ :

Ս. Դ. Հնչ. Կուս. դիմաները առնելով ուտելը և ռարունակ գեղծում ընելը եթէ Վարիչ Մարմինի բառարանով «մաքուր և կարգապահ» կը նշանակէ, ասոր ըսելիք չունինք : Ամէն սպարապետ տակ զի՞ս ինչո՞ւ կը խառնեն այդ գործին :

Զ. Երբ թէ Սամաթիոյ Մասնաճիւղը իմ «Թելադրութեամբ» հրապարակային ժողով է գումարեր. թէեւ ատանի բան չլայ, բայց եթէ նոյնիսկ եղած ալ ըլլայ, ատիկայ միթէ զիս արտաքսելու իրաւո՞ւնք կուտայ . . .

Սիրելի ընկերներ, այդ վեց կէտերը հիմք ըրունելով Վարիչ Մարմինը զիս արտաքսած է Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1911 յունիար 28 ին :

Լաւ ուշադրութեան ատէք այդ թուականը, որովհետեւ ատէկէ ձիւտ ուր օր վեցը, այն է փետրուար 5ին շաբաթ ցորեկ ժամը 3 ին (ը. ե.) Վարիչ Մարմինը զիս շաբաթ կընէց իր գրասենեակը՝ Մեծ նոր իան և յայտարարեց թէ՝ «թէեւ ըստ Զ. Պատգ. Ժողովի որոշման իմ չեղող քացման երկու ամսուան շրջանը լրացուցած ըլլալով չեղորգացումը կը չնջուի, քանի որ քննութիւն կատարուած չէ, բայց Վարիչ Մարմինը որոշած է իր պատասխանութեամբ զիս ԶԵԶՈՒՑՈՒԾՈՒԾ պահել մինչև խանատուութեամբ զիս ԶԵԶՈՒՑՈՒԾՈՒԾ պատգամականի մասնակիւն և հոն ներկայ կին պէս» ըստ ինք Սալահգելեանը և հոն ներկայ կին թուրքէն կարապետեանը, Սիւնիքը, Ճանկիւնեանը և Գեղարքունիքի կանիկեանը : Ասմէք բոլորը վկայ են : Երբոր ևս դամ վանիկեանը : Ասմէք բոլորը վկայ են : Երբոր ևս պահանջնեցի որ այդ յայտարարութիւնը գրաւոր կերպով կիբուած եւ սուրագուած) տան ինձ, «Վարիչ Մարմինը» միրժեց, գիտնալով որ այդ տեսակ պաշտօնաթուղթը իր մահավճիւր պիտի ըլլար բարոյապէս, որովհետեւ բերանացիւները կուրացումն, բայց սուրագութիւններն նացի ըստածները կուրացումն, բայց սուրագութիւններն առ կնիքը կը մնան և իրը փաստ կը ծառայեն օր մը օռու կնիքը :

Ուրեմն ատիկա փաստ է, որ 1911 թ. փետրուար 5/18ին Վարիչ Մարմինը զիս տակաւին չեղորգացուած կը նկատէ մինչ դեռ ատէկէ 8 օր առաջ . . . զիս սպարապետ ատէկ ատէկ :

Այս վրան բաց կեղծիքին ի՞նչ կըսէք : Երկրարդ՝
անկէ ՇԱԲԱԹՆԵՐ ՎԵՐԶԻ Վարիչ Մարմնի անդամ Մ .
Տէրտէրան Սամաթիոյ Մ . ճիւղի ժողովին մէջ , երբ իրեն
կը հարցնեն ընկերները թէ «չեղոքացման երկամսեաց
պայմանաժամը լրացած է , ուրեմն ընկեր Հմայեակ Արամ-
եանցի խնդիրը ինչ եղաւ» , այս հարցումին կը պատաս-
խանէ Վարիչ Մարմնի անդամը թէ հիմա Հմայեակ Արամ-
եանցը ըստ օրինի անդամ է Ա . Գ . Հնչակեան Կուսակ-
ցուքեան և կը վայելէ պարզ անդամի իրաւուքներն ու
պարտականութիւնները» :

Այս աչք ծակող հակասութեան ի՞նչ կ'ըսէք :

Առկէ ալ վերջը՝ ինքովինքը «Կեդրոնական Վար-
չութիւն» ներկայացնող Բ . Վարազգան զիս կանչելով
Մեծ նոր իսան ժամներով կը համոզէր թէ՝ «Գիտեմ որ
Վարիչ Մարմնի ըրածը լրաւթիւն է , զիտեմ որ Սապահ-
գիւղ իր աղոտա վրէժը կը յուծէ քեզմէ , զիտեմ որ քու-
դէմ եղածը ապօրնութիւն էր և անխզութիւն , — բայց
ինչ ալ ըլլայ , գու նորին Շւոտն ես , վեհանձնորին կրնաս
ներել , քանի որ Սապահգիւղին ինչ աղոտ մարդ լլալը
զիտես . եկուր յայտարարութիւն մը համէ թէ «Ես իմ
բոլոր զբաններս ես կ'առնեմ» և զատս կը յահճնեմ
Կեդրոնին . . . եթէ այսպէս չընես , արտաքաման շրջաբե-
րական հանած են և ես զրաւած պահած եմ քովս ,
կը ցրուեն Մ - Ճիւղերուն :

Հոգ հետաքրքիրը , ի հարկէ , իմ պատասխանը չէ ,
այլ այն խօսքերը որ կ'ըսէր Սապահգիւղի ընկեր Բ . Վա-
րազգատը իր «պաշտօնակցին» մասին . . . Դժբախարար
քանիցս պահանջեցի որ Վարազգատ իր խօսքերը ու է
ուրիշի մօտ կրկնէ , բայց չուզեց , որպէս զի վերջը կըր-
այ ուրամալ :

Է .

Այդ անսպասուարեր առաջարկը չնպանելուս վրայ
էր , որ «վրաւուած և պահուած» արտաքսման շրջաբե-
րականը մէջանդ երա ու տարածուեցաւ թէ՝ թուրքիոյ և
թէ Սարասահմանի Մասնաձիւղերուն (ինձ ալ արտասահ-
մանի ընկերները զրկած էին թիւ 306 շրջաբերականը) ,
սակայն այնքան զիսեմ , որ Սապահգիւղեան և իր կա-
մակասարներ ամբնէն անազնիւ Եղանակով կը հաղածեն
զիս : Կը հաղածեն աջ ու ձախ : Կը հաղածեն սուտերով :
Կը հաղածեն զրաբարառութիւններով : Կը հաղածեն «Արե-
ւելք» և «Կավոօչ» ընկած թերթերով : Կը հաղածեն թը-
ռուցիններով , նամակներով , շրջաբերականներով , հետա-
զուցով , ոյօքօթով , և մինչև անդամ սօրաններով . . . վա-
րիչ Մարմնը երբ կը ակսնէ որ Մասնաձիւղերը մազի-
րի վասահութիւն չունին իր վրայ և բոլոր զիտակից
Մ - Ճիւղերու ընկերներն ինձ հետ են , կատաղութենէն
ուրիշ բան չկրնաք ընել , կ'ըսկոի Մասնաձիւղերին և
ընկերներն զրկուած պահները ծախսել Հմայեակ Արամ-
եանցը հաղածելուն վրայ և անոր դէմ շրջաբերական ու
միա զրութիւններ հանելով կզբաղի , փոխանակ կուս .
այլ զրութիւններ հանելով կզբաղի , փոխանակ կուս .
կենական անհրաժեշտ պէտքեր հոգալու . . .

~~Եթէ Վարիչ Մարմնը զիս հաղածելու համար գործ~~
զիս ծրագիրն ու ժամանակին կէսը Կուսակցութեան և
Ազգին ծառայեցնէր , զստան եմ թէ հիմա մեր կուսակ-
ցութիւնը այսպէս ընկած պիտի չըլլար :

Զիս հաղածելէ զատ կը հաղածեն նաև իմ ընկերները ,
իմ համակիրները , իմ ընտանիքը , իմ «Հայուն Երզա-
րանը» , «Կահակը» , «Ա . Գ . Հնչակեան պատմութիւնը» . . .

Կը հաղածեն աւելի անազնիւ Եղանակով , քան Հա-
միակն պաշտօնեանները :

Մինչև անգամ «թիւ 8 շրջաբերականով» կարգին
կարդալ իմ գրքերը, իմ հրատարակութիւնները . . .
«Քիւզանդիսն», «Ժամանակ», «Կալուշ», «Արեւելք»,
«Աղասամարտ», «Դրօշակ» եւն . կարդալ կարաօնեն
ընկերներուն, բայց «Կոհակ» կարդալ կ'արգիլն, կար-
ծէք Ս. Դ. Հնչակեան Մ-ձիւղերէն ու Ընկերները ըստ-
րուիներ են, որ կարելի ըլլայ բարձրագոյն հրամաններով
հնագանդեցնել զանոնք բոնակալ ու ապօրէն որոշում-
ներու : Բարեբազդաբեր Մ-ձիւղերը այդ շրջաբերականն
առնելէ յետոյ խորին զգուանք զգացին Վարիչ Մարմիկ
հանդէպ, արհամարեցին իր շրջաբերականներն ալ, իր
հրահանգներն ալյ ցոյց առւին որ Ս. Դ. Հնչակեան կու-
սակցութիւնը առանձիւ անազնիւ ու ազտոտ հրամանները
ուորի տակլ կ'առնէ :

Ասկէ վերջն էր որ Մասնուժերը և Ընկերները,
ինչպէս նաև Պոլտոյ Հնչակեան Ռւսանովները,
ոկտան ամենամեծ հոսնդով կարդալ «Կոհակ»ը և առ-
քածել զայն : Ասով Մ-ձիւղերը բարոյական ապտակ մը
իջեցուցին Վարիչ Մարմիկ երեսին և «Կոհակ»ի պէս
համեստ թերթին չուրջը բոլորուցան : Եոյն եռանդով
ընդունեցին Ընկերները նաև «Հայուն Երգարանը» և միւս
զրուածքներս : Իսկ «Ս. Դ. Հնչակեան Պատմութիւն»
առաջտանէն կրկնապատիկ և եռակատիկ աւելի կը
տարածուի ամենուրեք :

Գրեթէ ամբողջ արտասահմանի մեր Մ. ձիւղերն ու-
գործադիր Յանձնախութերը և Ընկերները իրենց համա-
կերանքն ու բոլորանուեր աջակցութիւնն են արամազր-
րած Կոհակին և միւս գործերուս . . .

Ը.

Ներեցէք, սիրելի՝ Ընկերներ, որ հարց մը ևս տամ

Զեզ, մէ ի՞նչպէս կ'ըլլայ որ հրապարական կը չեղոքա-
ցրնեն և ներքնապէս կարտաքսեն, փոխանակ ըստ օրինի
ճիշտ հակառակն ըներւ :

Չեղոքացումը զգուշացուցման մէկ խստացածձ ևն է
մինչդեռ արտաքսումը՝ պատիմ, որ պէտք է անօրինուի
հրապարական ի գիտութիւն ամբողջ հասարակութեան և
առիգուշութիւն . . . Վարիչ Մարմիկը գիտնարով որ եթէ
հրապարակով արտաքսէ, պիտի սախազուի պատճառաբա-
նել, մինչդեռ Դուք ալ վերև աւեսաք որ իր պատճառա-
նութիւնները պարզապէս պառաւական ըսի ըստաներ են և
չարամիս յերիւրանքներէ անդին չեն անցնիր, ուստի
չհամարձակիցան «արտաքսումը» հրապարակ ձգել :

Հետաքրքիր է նաև թիւ 306 շրջաբերական-նամա-
կին վերջաւորութիւնը : Անգամ մըն ալ կարգացէք, սի-
րելի ընկերներ, վերջին էջը և պիտի տեսնէք որ զայ-
րացուցիչ անտառութեանը զիս «կուսակցական դաւա-
նան» անտառնելէ և արտաքսելէ վերջ կը զրէ Վարիչ
Մարմիկը :

«Ս.յո տիսուր իրազութիւնը ձեզ յայտնելոց յետոյ,
կուգանք աւելցունելու, որ սա ո՛չ մի լքում, ո՛չ մի
զարմանք չպիտի պատճառէ . . .» :

Իրենք ալ կըպան, որ Հնչակեան Մ-ձիւղերը և Ըն-
կերները պիտի չհանդուրժեն այս անարդարանալի ոճիրնը
և պիտի զայրանան իրենց դէմ, ուստի կ'աշխատին . . .
խուսափիլ շարքերու անտեղիսալի պամթկումն :

Զեմ զիսեր թէ Մ-ձիւղերն ու Ընկերները ինչ են
զրած այդ մասին Վարիչ Մարմիկն, բայց ինձ զրուած
խիստ բազմաթիւ զբութիւնները կապացուցանեն թէ
ամին տեղ բուռն դժգոհութիւն է ամբարուած Վարիչ
Մարմիկ դէմ: Եթէ իմ սասցած նամակները հրապարա-
կ կարելի ըլլար, Դուք պիտի զգացիք որ Ս. Դ. Հն-

չակեանութիւնը նողկանքով կը նայի Վարիչ Մարմիկ
արարքին վրայ, ինչ որ հոգեկան սփոփանք մ'է և կ'ա-
պացուցանէ մեր կուսակցութեան առողջ բավանդակու-
թիւնը :

Այս իրողութեան համգէպ ինձ կը մնայ բատ առաջ-
նոյն նուիրուիլ, պինդ փարիլ Ա. Դ. Հնչակեան սուրբ Պե-
րոշին, արհամարել բոլոր հալածանքներն և հոգւով որը-
տով աշխատի կուսակցութեան բարգաւաճութին: Այսու-
հետեւ իմ ջանքս պիտի բլայ նամբերել բոլոր զրկանք-
ներուն և եռանդուն ու անձնուէր գործունէութեան մէջ
վնասուել միսիթարութիւնո :

Եւ աշխատած եմ և պիտի աշխատիմ կենդանի գոր-
ծով պատասխանել բոլոր անոնց, որոնք իմ հալածուե-
լուս մէջ կը վնասուն իրենց հաճոյքը :

Յառաջ անդիսա, սիրելի՛ ընկերներ, միշտ բարձր
պահենք Հնչակեան անունը, միշտ կուրծք ասնք ամէն
գժուարութեան և մըշտ մէկ նպասակ անհենանք զեկու-
վար, այս է անդուլ աշխատանքով անսասան պահել
Հնչակեան կազմակերպութիւնը :

Բոլոր կատարուածներուն քննութիւնը և դատաս-
տանը Տաճկատանի Յ. Պատու, Ժաղովին վերապահելով
կը սեղմիմ բոլոր անկեղծ Հնչակեաններուն ձեռքը և կը
գումա՞յ:

Կեցցէ՛ Ա. Դ. Հնչակեան կուսակցութիւն:
Ժաղովը, Հնչակեան կուսակցութիւն:

Զերմանիրմ համբոյցներով
ՀՄԱՅՆԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ

Յ. Պ. —

Վերջին պահուն ձեռքս անցաւ կեղր. Վարիչ Մարմ-
իկ թիւ 9 Շրջաբերականը, որու մասին կուղեմ իմ ըն-
կերական գիտողութիւններս ընել, միայն օրինական տե-
սակէտով, առանց մարդամասութեանց իշխալու :

Սիրելի ընկերներ, մենք սոսիալիստ կուսակցութիւն
մին ենք, մեր շարքերը կազմուած են օրէ աշխատող՝
օրէ ասլուղ բանուորներէ, արհաստաորներէ, թշուառ
գիւղացիներէ և նիւթապէս անապահով մտաւորական-
ներէ :

Արդ, մեր ընկերները, շատ աննշան բացառութեամբ
բոլորն ալ կը վերաբերին ժողովուրդի չքաւոր գաստոն:
Այս բանը ևս փորձով գիտեմ. լինելով մէկ գործօն ան-
գամը նախորդ կեղր. Վարիչ Մարմիկ, հաստատ գիտես-
որ Հնչակեան շարքերը՝ բարոյագէս ինչ կերպ ալ տրա-
մադրուած լլլան, նիւթապէս շատ համեստ չափով կըր-
նան արտայատուիլ:

Այս աւսակէտով ևս գործնական չեմ գտներ կեղր.
Վարիչ Մարմիկ Գրդ Շրջ. Պատու առղերը՝ «Կեղր. Վ. Պ.»
Մատունելով ընկերներու ցոյց առած անպարտածա-
նաչութիւնը և զատապարտելի անհոգութիւնը... որու-
շած է խրաբանչւր Ա. Դ. Հնչ, ընկերոջմէ անապայման
պահանջի նուազազոյն չափով 5 զրուց բացառապէս
«Նոր Աջաւանի և Հնչ, գրականութեան համար»:

Բայս իս կեղր, Վարիչ Մարմիկնը ԽթԱՀՈՒՆԻՑ ԶՈՒՆԻ
ամեն մէկ Հնչակեանէ «ՊԱՀԱՆՁԵԼՈՒ» առնուազն 5 ա-
կան զրուչ:

Մենք ամին բան Պալոյ իրականութեան վրայ չա-
փելու չենք, Պալոյ և կարգ մը բարեկեցիկ քաղաքնե-
րու մէջ իրաւ է թէ 5 զրուց բայ ինքան մէծ

գումար մը չէ . բայց չմոռնանք որ մենք գործ ունինք զիսաւորաբ կոտորածներու , թալանի և աւերմանքներու ենթակայ գաւառացի ժաղավարդին ամենէն հարստահարուած մասին հետ , որուն հացակարօս և լալահառաջ աղաղակը աշխարհ բննած է . . . 5 ական չէ՝ 100 ական դրուշ աղ պէտք է տալ կուս . մամուլին և գրականութեան համար :

Ասիկա ամենէն Կուիրական և անյետածգելի պարտականութիւններէն մէին է , բայց պիտի տան անո՞նք , որոնք ԿՈՐՈՂ են :

Ի՞նչ տան այն Մ-ճիւղերը և ընկերները , որոնք ո՞չ միայն դրամ չունին , հապա պարտերու տակ ընկճուած՝ ուրիշի օգնութեան կարօս են :

Ի՞նչ տան այն ընկերները , որոնք ունեցածնին տաւէ վերջ , Կուսակցութեան համար ծանր տոկոսներ կը վճարեն զանազան վաշխառուներու ,

Ի՞նչ տան այն ընկերները , որոնք իրենք կուս . վըրաց նիւթական պահանջներ ունին :

Ի՞նչ տան այն ընկերները , որոնք տեսած են ու կը տեսնեն որ արդի կեդր . Վարիչ Մարմինը իրենց ուէ յոյս չի ներշնչէր և առած դրամներն ալ իր նպաստակին չգործածեր և զիրենք ալ ամօթով կը ծգէ ուրիշներուն քով . . .

Ի՞նչ տան այն ընկերները հապա , որոնք գժբաղդ պարագաներու բերմամբ որևէ վասահութիւն չունին կեդ . Վարիչ Մարմինի վրայ և Պատգ . Ժողովին կը սպասին անոր զեղծուները մէջ տեղ հանելու համար . . .

Ի՞նչ տան այն ընկերները , որոնք կեդր . Վարիչ Մարմինի մէջ Գործի Մարդ չեն տեսներ և անոր տաղիկարութիւնը աչքերուն առջև է :

Ի՞նչ տան այն ընկերները , որոնք կը տեսնեն որ

դրամ չի պահանջող գործերն իսկ չեն տեսնալիր և խեղճ Հնչակեան Կուսակցութիւնը թողնուած է անտէր-անտիւրական և անպաշտպան իր հակտուակորդներուն դէմ . . .

Բո՞ք , ի՞նչ տան այդ բոլոր ընկերները : Եւ ՏԱԼ ԶԿՐՆԱԼՆՈՒԽՆ ՀԱՄԱՐ ի՞նչ իրաւունքով կեզր . Վարիչ Մարմինը կը սպասնայ թէ :

«Եթէ ո և է Մ-ճիւղ կամ ընկեր պարտազանց գոնուփ և այս հրամայական պարտականութիւն չկատարէ Չ ամսուայ ընթացքին մէջ , Վարիչ Մարմինս առանց բոպէ մը իսկ տաստանուելու այդպիսի մասնաձիւղը պիտի լուծէ և անդամը գուրս վարուէ . . . :

Օհօ՛ , կեցցէ՛ սոսիալիստական ըմբունումը , կեցցէ՛ Հնչակիզմը . . .

Ս.յս ի՞նչ անիրաւութիւն է , այս ի՞նչ ԲԱԽՆՈՒԹԻՒՆ է , որ կը պատշաճի բոնակալ կառավարութեանց միայն . ասսնկ Հնչակեանութիւն կ'ըլլաց , ալ ինչո՞ւ կը բողոքինք հարստահարիչ պաշտօնեանց դէմ , ալ ինչո՞ւ համար են մեր բոլոր տեսութիւնները . . .

Կեդր . Վարիչ Մարմինի այս կամայական պահանջը ուսքով զիսով ՀԱԿԱՆԱԿ և ՀԱԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՆԵՄՆԵՐՈՒԽՆ . և այդ պատճառով ալ թիւ ԳԵՐՃԱՐԵՐԱԿԱՆ ես կը նիստեմ իբր անորէն և հակամինչակեան գրութիւն մը , որ ոչ միայն չի կընար պարաւդիր բլազ մեր շարքերուն , այլ նա ամեն տեղ պէտքէ հանդիպի արգար բողոքի :

Ինչո՞ւ Կեդր . Վարիչ Մարմինը չըսեր թէ կանոնագրի ո՞ր յօդուածի արամագրութեան և կամ ո՞ր Պատգ . Ժողովի որոշման համաձայն այդ պահանջը կը դնէ և մանաւանդ լուծելու և արտաքսելու այդ սպասնալիքը կը կարդայ :

«Նոր Աժխարհը» ՀԱՅԱԼՈՒՅ յանցունքը Մասնաձիւ-

դերու և ընկերներու վրայ՝ ինչու կը ձգէ կեզր. Վարիչ Մարմինը, երբոր կտղմ ու պատրաստ Ապագայ. պաշտօնաթերթը ինք իր ձեռքով խափանեց և ասով իսկ ցոյց տուեց թէ ինք ոչ միայն օրաթերթ հանելու բարոց յական կորով և կարողութիւն չունի, այլ եղածն ալ մեռցնելու կողմն է և փոքրիկ շաբաթաթերթ մըն ալ չի կրնար համել :

Մասնաճիւղերը և ընկերները մեզաւոր չեն, երբ կը տեսնեն որ կեզր. Վարիչ Մարմինը ապիլիար է բառի բովանդակ նշանակութեամբ :

Սիրելի ընկերնե՛ր, մեռճեցէք վայրկեան մը թէ ինչ ԳՈՐԾ է տեսած արդի կեզր. Վարիչ Մարմինը, իր ո՞ր խոստումն է կատարած, իր ո՞ր ըրածովը կրնայ մէջանեղ ելնել: Քանի մը հոգի ասդին-անձակառաբաց մէջանեղ ելնել: Քանի մը հոգի ասդին-անձակառաբաց մը հոգի առաջ անհասկնավի ոճով իմբուդին զրկելը և քանի մը հաստ անհասկնավի ոճով իմբուդին զրկելը և քանի մը հաստ անհասկնավի ոճով իմբուդին է գրուած շրջաբերակիաններ հանելը գործունէութիւն է միթէ :

Ի՞նչ նախաձեռնող հոգի, ի՞նչ զոհողութիւն, յեշ զափոխական ի՞նչ թափ ցոյց տուաւ կեզր. Վարիչ Մարզափոխական ի՞նչ թափ ցոյց տուաւ կեզր. Վարիչ մինը իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքին մէջ, մինը իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքին մէջ, մինը իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքին մէջ, մինը առումն Մ-ՃԻՒ-ՂԵՐԱԿ և ընկերներուն որ ի՞նչ կը ի՞նչ առումն Մ-ՃԻՒ-ՂԵՐԱԿ և ընկերներուն որ ի՞նչ կը պահանջնեն հիմա... .

Սա ի՞նչ մեռճութիւն է, իսէ՛ր Ասաւուծոյ, մեր Սա ի՞նչ մեռճութիւն է, իսէ՛ր Ասաւուծոյ, մեր կայ եղանք :

Տաճկառանի Ա. Պատկ. Ժողովին յետոյ ա՞յս պիտի կուսակցութեան դիրքը... .

ար մեր կուսակցութեան դիրքը... .
Սիրելի ընկերնե՛ր, որքան ալ կուզեմ լուել և մոռացութեան տու այս ցաւերը, բայց չեմ կրնար, որով հետեւ ամեն օր ամէն ժամ կը տեսնեմ թէ ինչպէ՞ս մեր պատուական կուսակցութիւնը զօրանալու փոխարէն մեր գլուխներուն երեսէն կիյանայ՝ կոր, կիյանայ՝ կոր... .

Գերմարդկային ձիգերու չնորհիւ կանգնած այս կուսակցութիւնը այսօր Սապահպիւ-եանի մը, Բ. Վարազգաստի մը և անսոց կամակատար խմբակի մը ձեռքով կը մերկանայ՝ իր վաղեմը մտքուր գաղտիարականութենէն, կը պրկուի՛ իր զմայլելի հմայքէն, կը պղտիկնայ՝ իր անզուգական մեծութեան մէջ... . Ու այս անեղ կացութեան առջեւ իմ հոգին կը լիցուի անզպատում գտանութեամբ, կը համակուիմ զարսութիւ և անողոքելի ցասման զգացումներով, կը միստ' ներսիզիս և որպէս անթեղ մտղմաղ կայրիմ իմ մէջ, բայս' նախանձախնդիրու իրնամանանաց Հնչակեաններուն հետ, որոնք սովորացն պիտի արտաքանակն կուսակցութենէն, եթէ չհաճին մեր կեզր. Վարիչ Մարմին օ ական զրուշ զրկել, կամ վկայականներու փոխարժէք 2 ական զրուշը բատ թիւ 9 Երջարերականին :

Ընդունեցէք, սիրելի ընկերնե՛ր, թէ կեզր. Վարմինի այս քայլը իր բարոյական բովանդակութիւնը կարտացոլացնէ, բնչ որ արդիւնք է Հնչակեանուրինը իր եռքեան մէջ չըմբռնելուն. . .

Ատանկ Մարմին մը ա՛յեւս իրաւունք չունի պաշտօնավարելու. անոր պարաքը հիմա ուրիշ բան չէ, բայց եթէ խոխոն հրաւիրել Տաճկ. Բ. Պատկ. Ժողովը և իր «գործունէութեան» անհուն ոչնչութեամբ հնուանալ գործազիր իշխանութեան ասպարէցէն. . .

Ապելն ժամանակն ալ լրացած է. Վարիչ Մարմինը պարտաւոր և ասպիլ ամսոյ մէջ ցրուել ժողովին հրաւիրը, որպէսզի յուլիսին մէջ ժողովը գումարուի և օր ասած վերջ զրուի այս արգանատելի կացութեան : Հրաւիրը ցրուելէ յետոյ Վարիչ Մարմինը պիտի զրադի լոկ ընթացիկ զրդերով, առանց իրաւունք ունենալու այս կամ այն Մ-ՃԻՒ-ՂԵՐԱԿ և ընկերները լուծել կամ վտարել 5

զրուչի կամ վկայականի փախարժէքը պատրուակ բրունկով : Թիւ 9 Շրջաբերականը կարծէք կանխառմածուած անիբաւ միջոց մին է կարգ մը դժոնն Մ-ճիղեր և Ծնկերներ զրկելու ընտրելու և ընտրուելու իրաւունքն : Մեր Մ-ճիղերն ու Ծնկերները պէտք է աշալսւրջ զանուին և թոյլ չտան որ իրենց ու և է մէկ անգամը զոհ երթայ այսպիսի անորէնութեան :

Շատ հուանական է որ մինչև անդամ Պատգ . Ժողով չհրաւիրէ Կեդր , Վարիչ Մարմինը , որովհետեւ այդ ահեղ գատաստանին ներկայանալու երես չունի . բայց Մասնաճիղերը արթուն պիտի ըլլան և ի հարկին պիտի ստիպեն Կ. Վ. Մարմինը գտամարել Ա. Դ. Հաջակիսի կուս . Տաճկաստանի Յ. Բ. Նոդչ . Պատգամառու Հնչակեան կուս . Տաճկաստանի Յ. Բ. Նոդչ . Պատգամառու Ճիղերով , ճիշտ իր ժամանակին : Հակառակ պարագային այդ նախաձեռնութեան իրաւունքը կը փախանձիւ գոտ կազմ . կանոնագրի , 183 րդ յօդուածի Մ-ճիղերու մեծամանութեան :

Հ. Ա.

4 ապրիլ 1911 Կ. Պոլիս



卷之三

1967

2013



